


ՃԻՇՏ Է ԱՐԴՅՈՔ ԱՅՆ ՊՆԴՈՒՄԸ, ՈՐ ԿԱՐԵԼԻ Է ՍՏԱՆԱԼ ԿԱՄԱՅԱԿԱՆ ԳՈՒՅՆԻ ՃԱՌԱԳԱՅԹ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱՐՄԻՐ, ԿԱՊՈՒՅՏ ԵՎ ԿԱՆԱԶ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐ ԽԱՌՆԵԼՈՎ

Սպեկտրի կամայական գույնի համապատասխանում է վակուումում տարածվող որոշակի հաճախության մեներանգ լույսի ալիք: Տարբեր հաճախության լույսի ալիքներ խառնելով՝ հնարավոր չէ ստանալ մեներանգ ալիք: Ուստի, խիստ ասած, նշված պնդումը սխալ է:

Սակայն գույնի ընկալումը պայմանավորված է տեսողության ֆիզիոլոգիայով: Մարդու աչքը լույսի այնպիսի կատարյալ վերլուծիչ չէ, ինչպես, օրինակ, սպեկտրադիտակը: Ցանցաթաղանթի վրա տեղակայված երեք տեսակի «գունագգայուն» ընկալիչներից յուրաքանչյուրն առավել զգայուն է կարմիր, կապույտ և կանաչ գույներից մեկի նկատմամբ: Ուղեղը գույնի զգացողությունը ձևավորում է լուսազգայուն ընկալիչներից ստացվող նյարդային ազդակների ուժգնությունները համեմատելով: Դա իրոք հնարավորություն է տալիս կամայական գույնի տպավորություն ստեղծել՝ համապատասխան համամասնություններով երեք գույները խառնելով, որն արվում է, օրինակ, գունավոր հեռուստատեսության մեջ: Եթե «հեռուստատեսային» դեղին լույսի ճառագայթն անցկացնենք պրիզմայի միջով, ապա այն կտարրալուծվի կարմիր և կանաչ ճառագայթների, միջդեռ սպեկտրի «մաքուր» դեղին լույսը նույն պայմաններում չի տարրալուծվում: Ուրեմն՝ դրանք տարբեր ճառագայթներ են, բայց այդ տարբերությունը աչքը չի զանազանում:

Այսպիսով՝ ֆիզիկայի տեսանկյունից պնդումը սխալ է: Բայց, տեսողության ֆիզիոլոգիայի տեսանկյունից, այն կարելի է ճիշտ համարել:



Կարմիր և կանաչ գույների խառնուրդը աչքն ընկալում է որպես դեղին գույն, կանաչի և կապույտի խառնուրդը՝ որպես երկնագույն, կապույտի և կարմիրի խառնուրդը՝ որպես մորեգույն, իսկ կարմիրի, կանաչի և կապույտի խառնուրդը՝ որպես սպիտակ գույն: